արձանագրում է, որ «Պրեմիում լոու» ՍՊ ընկերության (Կատարող) և «Մալկ» ՍՊ ընկերության (Պատվիրատու) միջև 13.04.2026թ. կնքվել է Փաստաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր, որի 1.1, 2.1 և 2.2 կետերի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է իրականացնել Պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում ընդդեմ ՀՀ Ծիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի՝ թիվ ՀՀԾՄԳՀՀԿՀՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը (հայտարարությունն) անվավեր ճանաչելու, թիվ ՀՀԾՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով գնման ընթացակարգը շարունակելուն պարտավորեցնելու պահանջների շրջանակներում, որի գինը կազմում է 250,000.00 ՀՀ դրամ (դրական ելքի դեպքում + ևս 100,000.00 ՀՀ դրամ):

Քննարկվող պարագայում Հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է հայցադիմում և կից փաստաթղթեր, գործը քննվել է գրավոր ընթացակարգով, հայցը ենթակա է բավարարման, որպիսի պարագայում Դատարանը եզրահանգում է, որ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 150,000.00 ՀՀ դրամը, հետևաբար՝ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 150,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

## Վ Ճ Ռ Ե Ց

«Մալկ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Ծիրակի մարզի Գյումրու համայնքի՝ թիվ ՀՀԾՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին 2026թ. ապրիլի 6-ի որոշումն անվավեր ճանաչելու և ընթացակարգն ընդհատված պահից շարունակելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել թիվ ՀՀԾՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին 2026թ. ապրիլի 6-ի որոշումը՝ գնման ընթացակարգը շարունակելով ընդհատման պահից:

ՀՀ Ծիրակի մարզի Գյումրու համայնքից հօգուտ «Մալկ» ՍՊ ընկերության բռնագանձել 80,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ Ծիրակի մարզի Գյումրու համայնքից հօգուտ «Մալկ» ՍՊ ընկերության բռնագանձել 150,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

ՀՀ պետական բյուջեից «Մալկ» ՍՊ ընկերությանը վերադարձնել 120,000.00 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար։

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում։

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին։

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE2B-1D76-4173-99F9 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։*

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*